<u>ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ</u>

Ամսաթիվ՝ 2019թ.նոյեմբերի 11

KfW-ի, Մայնի Ֆրանկֆուրտ (KfW),

և

Հայաստանի Հանրապետության

(Վարկառու)

միջև, ի դեմս՝

Ֆինանսների նախարարության

40 000 000,00 եվրո

- Քաղաքականության վրա հիմնված վարկ (ՔՀՎ)

Շրջակա միջավայրի պահպանություն -

BMZ 3010 00 579

Վարկ N 29426

Բովանդակություն1

Նախաբան....3
1. **Վարկը**....4
2. **Մասհանումը**....4
3. **Վճարները**....7
4. **Տոկոսը**....8
5. **Մարումը և վաղաժամկետ մարումը**....16
6. **Հաշվարկներն ու վճարումները՝ ընդհանուր առմամբ**....20
7. **Գերմանիայի Դաշնային Հանրապետության երաշխավորությունը**....24
8. **Անօրինականությունը**....24
9. **Ծախսերն ու պետական գանձումները**....24
10. **Հատուկ պարտավորություններ**....26
11. **Համաձայնագրի դադարեցումը**....29
12. **Ներկայացուցչությունը և հայտարարությունները**....31
13. **Ծրագրին առնչվող տեղեկությունների հրապարակումը և փոխանցումը** 32
14. **Ընդհանուր դրույթներ**....35

Հավելված 1 Տոկոսի փոփոխման հայտի ձև....41

Հավելված 2....42

Վարկառուի իրավախորհրդատուի իրավաբանական եզրակացության ձև....42

Հավելված 3....50

Համապատասխանության մասով պարտավորությունները....50

Նախաբան

KfW-ն և Վարկառուն համաձայնության են եկել քաղաքականության նախաձեռնությունների վերաբերյալ՝ սահմանելով նպատակները, քաղաքականությունները և գործողությունները, ինչպես նկարագրված է 2019 թվականի համար քաղաքականության մատրիքսում (Առանձին համաձայնագրի հավելված 1 (ինչպես սահմանված է ստորև)) (Քաղաքականության մատրիքս)՝ Հայաստանի շրջակա միջավայրի պահպանության բնագավառում ոլորտային բարեփոխումների գործընթացները բարելավելու համար:

Վարկի պայմանները և դրույթները համապատասխանում են համաձայնագրի ստորագրման ամսաթվի դրությամբ կիրառելի՝ որպես Զարգացման պաշտոնական աջակցություն (ԶՊԱ) ճանաչվելու մասով ՏՀԶԿ պահանջներին:

Դրա հիման վրա և պայմանով, որ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը կտա Վարկի երաշխավորություն, KfW-ն կտրամադրի վարկ՝ սույն Վարկային համաձայնագրի պայմաններին և դրույթներին համապատասխան:

1. Վարկը

1.1 Գումարը: KfW-ն Վարկառուին կտրամադրի ընդհանուր **40000 000,00 եվրոն (քառասուն միլիոն եվրո)** չգերազանցող գումարի Վարկ (**Վարկ**):

1.2 Նպատակը: Վարկի նպատակն է աջակցել շրջակա միջավայրի պահպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության բարեփոխումներին (Ծրագիր): Վարկառուն և KfW-ն Ծրագրի մանրամասները կսահմանեն առանձին համաձայնագրով (**Առանձին համաձայնագիր**), որը պետք է ստորագրվի Վարկառուին ներկայացնող՝ Ֆինանսների նախարարության, որպես ծրագրի իրականացման գրասենյակ (**Ծրագրի իրականացման գրասենյակ**)՝ Շրջակա միջավայրի նախարարության և KfW-ի կողմից:

1.3 Հարկերը, գանձումները, մաքսատուրքերը: Հարկերի և այլ պետական գանձումների մասով Վարկառուի պարտավորությունները, ինչպես նաև մաքսատուրքերը Վարկի միջոցներից չեն ֆինանսավորվելու:

2. Մասհանումը

2.1 Մասհանման հայտ ներկայացնելը: Սույն Համաձայնագրի 2.3 կետով (Մասհանման նախապայմանները) նախատեսված մասհանման բոլոր նախապայմանները կատարվելուց անմիջապես հետո KfW-ն կտրամադրի վարկը մեկ տրանշով՝ Վարկառուի պահանջով:

2.2 Մասհանման հայտ ներկայացնելու վերջնաժամկետը: KfW-ն իրավունք ունի մերժելու մասհանումներ կատարել՝ 2020 թվականի ապրիլի 30-ից հետո:

2.3 Մասհանման նախապայմանները: KfW-ն պարտավորվում է մասհանումներ կատարել սույն Համաձայնագրի շրջանակներում միայն այն դեպքում, եթե առկա են հետևյալ նախապայմանները՝ KfW-ի համար բավարար ձևով և բովանդակությամբ.

ա) Վարկառուն, ներկայացնելով իրավաբանական եզրակացություն, որի բովանդակությունը, ըստ էության, համապատասխանում է սույն Համաձայնագրի հավելված 2-ի ձևին (Վարկառուի իրավախորհրդատուի իրավաբանական եզրակացության ձև), ինչպես նաև ներկայացնելով այդ Իրավաբանական եզրակացությանը վերաբերող բոլոր փաստաթղթերի վավերացված պատճենները (յուրաքանչյուրը՝ թարգմանված սույն Համաձայնագրի լեզվով), KfW-ի համար բավարար կերպով ցույց է տվել, որ Վարկային համաձայնագիրն իրավաբանական ուժ ունի և կարող է կատարվել, մասնավորապես՝

(i) Վարկառուն կատարել է իր պետության սահմանադրական իրավունքով և կիրառելի այլ իրավական դրույթներով նախատեսված պահանջները՝ սույն Համաձայնագրով իր բոլոր պարտավորությունները վավեր կերպով ընդունելու համար,

(ii) KfW-ն, Վարկը շնորհելիս, Հայաստանի Հանրապետությունում ազատվում է տոկոսներից ստացվող եկամուտներից գանձվող բոլոր հարկերից և բոլոր տուրքերից, միջնորդավճարներից և համանման ծախսերից.

բ) KfW-ի տրամադրության տակ կա սույն Համաձայնագրի և Առանձին համաձայնագրի բնօրինակը՝ իրավաբանական ուժ ունեցող ստորագրությամբ.

գ) KfW-ն ստացել է սույն Համաձայնագրի 12.1 կետում (Վարկառուին ներկայացնելը) նշված ստորագրությունների նմուշները.

դ) Սույն Համաձայնագրի 7-րդ կետում (Գերմանիայի Դաշնային Հանրապետության երաշխավորությունը) նշված՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության երաշխավորությունն ուժի մեջ է և գործում է առանց որևէ սահմանափակման.

ե) Վարկառուն վճարել է սույն Համաձայնագրի 3.2 կետով (Կառավարման վճարը) սահմանված Կառավարման վճարը.

զ) չի առաջացել դադարեցման համար որևէ պատճառ, ոչ էլ այնպիսի իրադարձություն, որը հիմք կհանդիսանար ծանուցմամբ, ժամկետի լրացմամբ, հանգամանքների պարզաբանմամբ կամ որևէ պայմանի չկատարման հետևանքով դադարեցնելու համար (դադարեցման հնարավոր պատճառ).

է) ի հայտ չեն եկել այնպիսի արտասովոր հանգամանքներ, որոնք խոչընդոտում կամ լրջորեն վտանգում են Ծրագրի իրականացումը, գործողությունը, նպատակը կամ Վարկառուի կողմից սույն Համաձայնագրով ստանձնած վճարման պարտավորությունների կատարումը,

ը) Վարկառուն KfW-ին ապացույց է ներկայացրել այն մասին, որ Կատարողական ցուցանիշները և Հաստատման ձևերը պահպանվել են (ինչպես սահմանված է Առանձին համաձայնագրի հավելված 1-ում):

KfW-ն իրավունք ունի Վարկից ցանկացած մասհանում կատարելուց առաջ պահանջելու լրացուցիչ փաստաթղթեր և ապացույցներ, որոնք այն անհրաժեշտ կհամարի իր հայեցողությամբ՝ սույն բաժնում սահմանված մասհանման նախապայմանների կատարման հարցում հավաստիանալու համար:

2.4 Մասհանման ընթացակարգի մանրամասները: Վարկառուն, այս առումով ի դեմս Ֆինանսների նախարարության, և KfW-ն Առանձին համաձայնագրով կսահմանեն մասհանման ընթացակարգի մանրամասները, մասնավորապես այն ապացույցները, որոնք պետք է ներկայացնի Վարկառուն՝ փաստաթղթերով հիմնավորելու համար, որ Վարկի պահանջված գումարներն օգտագործվում են այն նպատակով, որի վերաբերյալ համաձայնություն է ձեռք բերվել:

2.5 Մասհանումները չեղարկելու իրավունքը: Վարկառուն՝ պայմանով, որ կատարել է սույն Համաձայնագրի 10-րդ կետով (Հատուկ պարտավորություններ)

նախատեսված իր պարտավորությունները, կարող է, նախապես ստանալով KfW-ի համաձայնությունը, հրաժարվել Վարկի չվճարված մասի մասհանումից՝ սույն Համաձայնագրի 2.6 կետով (Չօգտագործման վճարը) նախատեսված և դրանով սահմանված **Չօգտագործման վճարի** վճարման դիմաց:

2.6 Չօգտագործման վճարը: Եթե, սույն Համաձայնագրի 2.5 կետի (Մասհանումները չեղարկելու իրավունքը) համաձայն, Վարկառուն չեղարկում է Վարկի գումարի մասհանումը, որի համար արդեն տոկոսադրույք է որոշվել, կամ Վարկի գումարն ընդհանրապես չի մասհանվում, կամ չի մասհանվում մինչև սույն Համաձայնագրի 2.2 կետում (Մասհանման հայտ ներկայացնելու վերջնաժամկետը) նշված վերջնաժամկետը, ապա Վարկառուն KfW-ի պահանջով անմիջապես նրան է վճարում այնքան գումար, որքան KfW-ին անհրաժեշտ կլինի Վարկի գումարի մասհանում չկատարելու արդյունքում (**Չօգտագործման վճարը**) կրած բոլոր կորուստները, ծախքերը կամ ծախսերը փոխհատուցելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ մասհանում չկատարելը համարվում է KfW-ի կողմից սույն Համաձայնագրի խախտում: KfW-ն հաշվարկում է Չօգտագործման վճարի գումարը և հաղորդում Վարկառուին:

3. Վճարները

3.1 Պարտավորության վճարը: Վարկառուն վճարում է չվերադարձվող պարտավորության վճար (**Պարտավորության վճարը)՝** տարեկան 0.25% չափով՝ հաշվարկված Վարկի չմասհանված գումարներից:

Պարտավորության վճարը ենթակա է վճարման կիսամյակային մուծումներով՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին:

Պարտավորության վճարը գանձվում է սույն Համաձայնագրի ստորագրումից սկսած եռամսյա ժամանակահատվածի ընթացքում և շարունակում է գանձվել մինչև Վարկի լրիվ մասհանումը, կամ եթե կիրառելի է՝ մինչև Վարկից մասհանումների

վերջնական դադարեցման ամսաթիվը:

3.2 Կառավարման վճարը: Վարկառուն KfW-ին վճարում է չվերադարձվող մեկանգամյա միանվագ կառավարման վճար՝ սույն Համաձայնագրի 1.1 կետում (Գումարը) նշված Վարկի գումարի 1,00%-ի չափով (**Կառավարման վճարը**):

Կառավարման վճարը պետք է վճարվի հետևյալ երկու ժամկետներից ավելի վաղ ամսաթվին. (i) նախքան առաջին մասնահանումը կամ (ii) սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց մեկ ամիս հետո: Կառավարման վճարը պետք է վճարվի վերոնշյալ ամսաթվերին՝ անկախ այն հանգամանքից, թե Վարկը մասհանվել է ամբողջությամբ, միայն մասամբ, թե ընդհանրապես չի մասհանվել:

4. Տոկոսը

4.1 Տոկոսը: Վարկառուն KfW-ին վճարում է տոկոս հետևյալ կերպ.

Փոփոխական տոկոսադրույք՝ ֆիքսված տոկոսի տարբերակով: Վարկառուն վճարում է տոկոս Վարկի դիմաց՝ հետևյալ դրույթներին համապատասխան.

ա) Փոփոխական տոկոսադրույք: Վարկառուի՝ հստակ արտահայտված պահանջի դեպքում Վարկից մասհանված յուրաքանչյուր գումարի վրա հաշվեգրվում է փոփոխական տարեկան տոկոս՝ սույն Համաձայնագրի 4.1 կետի «բ» ենթակետի (Տոկոսի վճարման ժամանակահատվածը) համաձայն՝ տոկոսի վճարման հետագա ժամանակահատվածների (**Տոկոսի վճարման ժամանակահատվածը**) հիման վրա: Փոփոխական տոկոսադրույքը (**Փոփոխական տոկոսադրույք**) բաղկացած է եվրոյով միջբանկային առաջարկվող դրույքից (**EURIBOR**)՝ գումարած տարեկան 0,95% (զրո ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական) մարժա: Եթե այդ ձևով հաշվարկված տոկոսը տարեկան 0% -ից ցածր է, ապա Տոկոսի վճարման համապատասխան ժամանակահատվածի համար Փոփոխական տոկոսադրույքը կլինի տարեկան 0%:

(i) Վկայակոչվող տոկոսադրույք: Տոկոսի վճարման ժամանակահատվածում կիրառվող EURIBOR-ը Ռոյթերսի EURIBOR01-ի էջում նշված տարեկան տոկոսն է (անհրաժեշտության դեպքում կլորացված մինչև մեկ տոկոսային կետի ամենամոտիկ 1/16-ը), կամ եթե այդ էջը չի պարունակում անհրաժեշտ տվյալը կամ վերականգնելի չէ, ապա Corp EBF-ի Բլումբերգի էջի վրա (կամ վերոնշյալ Ռոյթերսի կամ Բլումբերգի էջը փոխարինող հաջորդ էջի վրա) մինչև Տոկոսի վճարման ժամանակահատվածի սկզբին համապատասխանող երկրորդ Բանկային օրվա (ըստ սույն Համաձայնագրի 14.1 կետով (Բանկային օր) սահմանվածի)՝ Բրյուսելի ժամանակով մոտավորապես ժ.11.00-ին, եվրոյով EURIBOR-ը՝ Տոկոսի վճարման ժամանակահատվածի հետ համընկնող մարման ժամանակահատվածի համար, կամ եթե Տոկոսի վճարման համապատասխան ժամանակահատվածը չի համընկնում Ռոյթերսի կամ Բլումբերգի առաջարկվող ժամկետների հետ, ապա՝ հաջորդ ավելի երկար մարման ժամանակահատվածի համար առաջարկվող EURIBOR-ը:

(ii) Այլընտրանքային տոկոսանշում: Եթե սույն Համաձայնագրի 4.1 կետի «ա» ենթակետի (i) մասում (Վկայակոչվող տոկոսադրույք) նշված Ռոյթերսի և Բլումբերգի էջերում չեն արվել համապատասխան առաջարկներ, կամ եթե այդ էջերը չեն պարունակում անհրաժեշտ տվյալներ, կամ եթե այդ էջերը հասանելի չեն և չի եղել Հենանիշի դադարեցման ամսաթիվ համապատասխան Տոկոսի որոշման ամսաթվին կամ դրանից առաջ, ապա Տոկոսի վճարման ժամանակահատվածի համար կիրառվող EURIBOR-ը որոշվում է KfW-ի կողմից և հավասար է այն տարեկան տոկոսների թվաբանական միջինին (անհրաժեշտության դեպքում կլորացված մինչև մեկ տոկոսային կետի ամենամոտիկ 1/16-ը), որոնք Եվրոպական միջբանկային շուկայում առաջարկվում են եվրոյով վարկերի համար՝ KfW-ի կողմից ընտրված երեք առաջատար բանկերի

կողմից՝ համապատասխան Վարկի հետ համեմատելի գումարով և Տոկոսի վճարման համապատասխան ժամանակահատվածին ամենամոտ մարման ժամկետով՝ Տոկոսի վճարման ժամանակահատվածի սկզբին նախորդող երկրորդ Բանկային օրը:

(iii) EURIBOR-ի ընդհատումը: Այս մասով կիրառվում է հետևյալը.

ա) Բանակցություն: Բանակցությունների մեկնարկի ամսաթվից կողմերն անցնում են բարեխիղճ բանակցությունների՝ նպատակ ունենալով համաձայնեցնել Փոխարինման վկայակոչվող դրույքաչափը, Մարժայի ճշգրտումը և Հաջորդող տեխնիկական փոփոխությունները Հենանիշի ընդհատման ամսաթվից հետո ընկած ժամանակահատվածի համար: Բանակցություններում հաշվի են առնվում այդ պահի ընթացիկ շուկայական ստանդարտները և անցկացվում են այն նկատառումով, որ գործնականորեն հնարավորինս ողջամիտ չափով նվազեցվի կամ բացառվի տնտեսական արժեքի որևէ փոխանցում մի կողմից մյուսին:

բ) Միջոցների արժեքը: Հաշվի առնելով վերոնշյալ «ա» (Բանակցություն) ենթակետը՝ Հենանիշի ընդհատման ամսաթվին հաջորդող՝ Տոկոսի վճարման ցանկացած ժամանակահատվածի համար EURIBOR-ը փոխարինվում է KfW-ի կողմից Վարկառուին ծանուցված դրույքաչափով, որն արտահայտվում է որպես այնպիսի տարեկան տոկոսադրույք, որը KfW-ն ունի Վարկին համարժեք գումարի միջոցներից Տոկոսի վճարման համապատասխան ժամանակահատվածի ընթացքում այն աղբյուրից, որը նա ողջամտորեն ընտրում է՝ գումարած տարեկան 0,95 % (բառերով՝ զրո ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական):

(iv) Սահմանումներ: Սույն «ա» (Փոփոխական տոկոսադրույք) կետում՝

Հենանիշի դադարեցման ամսաթիվ նշանակում է՝ (i) այն օրը, երբ EURIBOR-ի ադմինիստրատորը ծանուցում է հրապարակում (ներառյալ՝ ցանկացած հայտարարություն իր ինտերնետային կայքում), որ EURIBOR-ի տրամադրումը դադարեցվելու է, (ii) այն ամսաթիվը, երբ EURIBOR-ի ադմինիստրատորի իրավասու մարմինը հրապարակում է ծանուցում (ներառյալ՝ ցանկացած հայտարարություն իր ինտերնետային կայքում) առ այն, որ՝ ա) հետ է կանչում ադմինիստրատորի թույլտվությունը կամ գրանցումը, կամ բ) արգելում է EURIBOR-ի օգտագործումը, (iii) այն օրը, երբ օրենսդրական ակտի հիման վրա կասեցվում է EURIBOR-ի հասանելիությունը, կամ (iv) Տոկոսի որոշման ամսաթիվը՝ պայմանով, որ EURIBOR-ը ցուցադրված չի եղել համապատասխան էջի վրա, կամ համապատասխան էջը հասանելի չի եղել Տոկոսի որոշման ամսաթվին անմիջապես նախորդող առնվազն 10 հաջորդական Բանկային օրվա ընթացքում:

Բխող տեխնիկական փոփոխություն նշանակում է սույն համաձայնագրի ցանկացած պահանջվող կամ ցանկալի բխող փոփոխություն, որն անհրաժեշտ է Փոխարինման վկայակոչվող դրույքաչափը և Մարժայի ճշգրտումն արդյունավետ դարձնելու համար:

Տոկոսի որոշման ամսաթիվ նշանակում է այն ամսաթիվը, երբ սույն համաձայնագրին համապատասխան, որոշվում է Տոկոսի վճարման ժամանակահատվածի նկատմամբ կիրառելի EURIBOR-ը:

Մարժայի ճշգրտում նշանակում է մարժայի փոփոխություն, որը, գործնականորեն հնարավորինս ողջամիտ չափով երաշխավորում է, որ EURIBOR-ի փոխարինումը Փոխարինման վկայակոչվող դրույքաչափով չի հանգեցնի տնտեսական արժեքի որևէ փոխանցման մի կողմից մյուսին:

Բանակցությունների մեկնարկի ամսաթիվ նշանակում է այն ամսաթիվը, երբ KfW-ն ծանուցում է Վարկառուին, որ իր ողջամիտ

կարծիքով, վարկավորման համապատասխան շուկաներում մշակվել են կիրառելի լուծումներ Հենանիշի ընդհատման ամսաթվից հետո EURIBOR-ը փոխարինելու համար:

Փոխարինման վկայակոչվող դրույքաչափ նշանակում է վկայակոչվող դրույքաչափ, որով Վարկառուն և KfW-ն համաձայնվում են փոխարինել EURIBOR-ը:

ա) Տոկոսի վճարման ժամանակահատվածը: Բացառությամբ Վարկի գումարի մասով Տոկոսի վճարման առաջին ժամանակահատվածի, Տոկոսի վճարման յուրաքանչյուր ժամանակահատված սկսվում է սույն Համաձայնագրի 4.3 կետում (Վճարման ամսաթվերը) սահմանված Վճարման ամսաթվին և ավարտվում հաջորդ Վճարման ամսաթվին: Վարկի գումարի մասով Տոկոսի վճարման առաջին ժամանակահատվածն սկսվում է այդ Վարկի գումարի մասհանման հաշվեգրման ամսաթվից և ավարտվում հաջորդ Վճարման ամսաթվին:

բ) Եթե Վճարման ամսաթիվը ոչ Բանկային օր է, ապա այն ճշգրտվում է սույն Համաձայնագրի 6.2 կետին (Վճարումը կատարելու սահմանված ամսաթիվը) համապատասխան: Տվյալ դեպքում Տոկոսի վճարման ժամանակահատվածն ավարտվում է ճշգրտված Վճարման ամսաթվի օրը, իսկ Տոկոսի վճարման հաջորդ ժամանակահատվածն սկսվում է ճշգրտված Վճարման ամսաթվին: Ճշգրտված Վճարման ամսաթվի նկատմամբ կիրառվում է մինչև Տոկոսի վճարման ժամանակահատվածի սկզբնական ավարտման օրը կիրառվող տոկոսադրույքը:

գ) Անցումը Ֆիքսված տոկոսադրույքի՝ Վարկառուի պահանջով: Վարկից վերջին մասհանումից հետո Վարկառուն կարող է պահանջել, որ այդ պահին չմարված ամբողջ գումարի նկատմամբ կիրառվի ֆիքսված տոկոսադրույք՝ հետևյալ դրույթներին համապատասխան (**Տոկոսի փոփոխություն**): Այն դեպքում, երբ Վարկառուն ցանկանում է, որ լինի

Տոկոսի փոփոխություն, կիրառվում են հետևյալ դրույթները.

(i) Ֆիքսված տոկոսի վճարման ժամանակահատվածը: Ֆիքսված տոկոսի վճարման ժամանակահատվածը սկսվում է այն ամսաթվից, երբ սույն Համաձայնագրի ներքոհիշյալ 4.1 կետի «գ» ենթակետի (iv) մասի (Ֆիքսված տոկոսադրույք) հիման վրա որոշված տոկոսադրույքը **(Ֆիքսված տոկոսադրույք)** կիրառվում է Վարկառուի պահանջով (**Ուժի մեջ մտնելու ամսաթիվ**) մինչև վերջին մարման գումարի լրիվ վճարումը: Ուժի մեջ մտնելու ամսաթիվը պետք է համընկնի Վճարման ամսաթվի հետ:

(ii) KfW-ին ծանուցելը: Վարկառուն կծանուցի KfW-ին իր՝ Տոկոսի փոփոխության պահանջի մասին՝ սույն Համաձայնագրի 1-ին հավելվածին (Տոկոսի փոփոխման հայտի ձև) ըստ էության համապատասխանող ձևով: Ծանուցման մեջ կոնկրետ պետք է նշվի Ուժի մեջ մտնելու ցանկալի ամսաթիվը, և այն պետք է ստացվի Գերմանիայի Դաշնային Հանրապետության Մայնի Ֆրանկֆուրտի ժամանակով ամենաուշը մինչև համապատասխան Ուժի մեջ մտնելու ամսաթվին նախորդող 15-րդ Բանկային օրվա ժ.12.00-ը:

(iii) Տոկոսադրույքի նշումը: Սահմանված ժամկետին, սակայն ոչ ուշ, քան Գերմանիայի Դաշնային Հանրապետության Մայնի Ֆրանկֆուրտի ժամանակով Ուժի մեջ մտնելու ամսաթվին նախորդող հինգերորդ (5-րդ) Բանկային օրվա ժ.12.00-ին, KfW-ն Վարկառուին տալիս է ոչ պարտադիր ֆիքսված տոկոսադրույքի նշումը, որը կիրառվում է սույն Համաձայնագրի 4.1 կետի «գ» ենթակետի (iv) մասի (Ֆիքսված տոկոսադրույք) համաձայն, եթե այդ նշման ամսաթվին պետք է տեղի ունենա այդ փոփոխությունը:

Եթե Վարկառուն առանց հետկանչման իրավունքի KfW-ին հաստատում է Տոկոսի փոփոխության և Ուժի մեջ մտնելու ամսաթվի

մասին՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Մայնի Ֆրանկֆուրտում ամենաուշը մինչև համապատասխան համաձայնեցված Ուժի մեջ մտնելու ամսաթվին նախորդող չորրորդ (4-րդ) Բանկային օրվա ժ.12.00-ը, ապա KfW-ն իրականացնում է հրահանգված Տոկոսի փոփոխությունը և տեղեկացնում է Վարկառուին՝ որոշված Ֆիքսված տոկոսադրույքի մասին, որը որոշվում է Ուժի մեջ մտնելու ամսաթվին՝ սույն Համաձայնագրի 4.1 կետի «գ» ենթակետի (iv) մասի (Ֆիքսված տոկոսադրույք) համաձայն:

Եթե Վարկառուն չի ընդունում KfW-ի կողմից առաջարկված Ֆիքսված տոկոսադրույքը, կամ KfW-ն չի ստանում Վարկառուի հաստատումը մինչև Գերմանիայի Դաշնային Հանրապետության Մայնի Ֆրանկֆուրտում համապատասխան Ուժի մեջ մտնելու ամսաթվին նախորդող չորրորդ (4-րդ) Բանկային օրվա ժ.12.00-ը, ապա KfW-ն ուժի մեջ չի դնում տոկոսադրույքի անցումը Փոփոխականից Ֆիքսվածի:

(iv) Ֆիքսված տոկոսադրույք: KfW-ն որոշում է Ֆիքսված տոկոսադրույքը Եվրոպական արժութային միության կապիտալի շուկայում երկարաժամկետ վարկերի համար այդ պահին գերակայող պայմանների հիման վրա՝ հաշվի առնելով KfW-ի կրած ծախսերը՝ գումարած տարեկան - 0,95% - մարժա: Եթե նման ձևով հաշվարկված տոկոսադրույքը տարեկան 0%-ից ցածր է, ապա Ֆիքսված տոկոսադրույքը կլինի տարեկան 0%: Նման ձևով որոշված Ֆիքսված տոկոսադրույքը կիրառվում է մինչև վերջին մարման գումարը սույն Համաձայնագրի 5.1 կետում (Մարման ժամանակացույցը) բերված մարման ժամանակացույցի համաձայն ստացվելը: KfW-ն Վարկառուին անմիջապես տեղեկացնում է

Ֆիքսված տոկոսադրույքի մասին:

(v) Չօգտագործման վճարը: Եթե սույն Համաձայնագրի 4.1 կետի «գ» ենթակետի (iii) մասի (Տոկոսադրույքի նշումը) համաձայն ծանուցումից հետո KfW-ն սահմանում է Ֆիքսված տոկոսադրույք Վարկի գումարի նկատմամբ սույն Համաձայնագրի 4.1 կետի «գ» ենթակետի (Անցումը ֆիքսված տոկոսադրույքի՝ Վարկառուի պահանջով) համաձայն, և եթե Վարկառուն այնուհետև չեղարկում է Տոկոսի փոփոխությունը, կամ եթե Տոկոսի փոփոխությունը չեղարկվում է մեկ այլ պատճառով, որի համար KfW-ն հաշվետու չէ, ապա Վարկառուն KfW-ի պահանջով, վերջինիս՝ առանց հապաղելու, վճարում է այնպիսի Չօգտագործման վճար, որը KfW-ին կփոխհատուցի բոլոր այն կորուստները, ծախքերն ու ծախսերը, որոնք KfW-ն կրել է այդ չեղարկման պատճառով: KfW-ն հաշվարկում է Չօգտագործման վճարի գումարը և հաղորդում Վարկառուին:

(vi) Հակադարձ անցման բացառումը: Տոկոսի փոփոխությունից հետո հակադարձ անցումը ֆիքսված տոկոսադրույքից փոփոխական տոկոսադրույքի բացառվում է:

4.2 Տոկոսի հաշվարկը: Վարկի մասհանված գումարի նկատմամբ տոկոսը հաշվարկվում է այն օրվանից (ներառյալ), երբ KfW-ի մոտ պահվող Վարկի հաշվից համապատասխան Վարկի գումարը մասհանվում է Վարկառուին՝ մինչև այն օրը (հանած), երբ համապատասխան մարումները կրեդիտագրվում են սույն Համաձայնագրի 6.3 կետում (Հաշվեհամարը, կրեդիտագրման ժամկետը) նշված KfW-ի հաշվի վրա: Եթե սույն Համաձայնագրի 4.1 կետի «գ» ենթակետի (Անցումը ֆիքսված տոկոսադրույքի՝ Վարկառուի պահանջով) համաձայն կատարվել է Տոկոսի փոփոխություն, ապա տոկոսը հաշվարկվում է՝ ներառյալ մարումների կրեդիտագրման օրը, առանց գանձելու տոկոս Ուժի մեջ մտնելու ամսաթվի համար: Տոկոսը հաշվարկվում է սույն Համաձայնագրի 6.1 կետի (Հաշվարկը) համաձայն:

4.3 Վճարման ամսաթվերը: Վճարվելիք տոկոսը ենթակա է վճարման ստորև նշված օրերին (յուրաքանչյուրը՝ **Վճարման ամսաթիվ**)՝

ա) մինչև մարման առաջին գումարի վճարումը կատարելու սահմանված ամսաթիվը՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին,

բ) մարման առաջին գումարի վճարումը կատարելու սահմանված ամսաթվին՝ սույն Համաձայնագրի 5.1 կետի համաձայն (Մարման ժամանակացույցը) այդ գումարների հետ միասին,

գ) դրանից հետո՝ մարման գումարների վճարումը կատարելու սահմանված ամսաթվին՝ սույն Համաձայնագրի 5.1 կետի համաձայն (Մարման ժամանակացույցը):

5. Մարումը և վաղաժամկետ մարումը

5.1 Մարման ժամանակացույցը: Վարկառուն Վարկը մարում է հետևյալ կերպ.

	Վճարումը կատարելու սահմանված ամսաթիվը	**Մարման գումար**
1	15.11.2024	1 904 761,90
2	15.05.2025	1 904 761,90
3	15.11.2025	1 904 761,90
4	15.05.2026	1 904 761,90
5	15.11.2026	1 904 761,90
6	15.05.2027	1 904 761,90
7	15.11.2027	1 904 761,90
8	15.05.2028	1 904 761,90
9	15.11.2028	1 904 761,90
10	15.05.2029	1 904 761,90
11	15.11.2029	1 904 761,90
12	15.05.2030	1 904 761,90

13	15.11.2030	1 904 761,90
14	15.05.2031	1 904 761,90
15	15.11.2031	1 904 761,90
16	15.05.2032	1 904 761,90
17	15.11.2032	1 904 761,90
18	15.05.2033	1 904 761,90
19	15.11.2033	1 904 761,90
20	15.05.2034	1 904 761,90
21	15.11.2034	1 904 762,00

Սույն Մարման ժամանակացույցը կարող է ժամանակ առ ժամանակ ճշգրտվել՝ 5.5 կետի համաձայն:

5.2 Վարկի չմասհանված գումարները: Վարկի չմասհանված գումարները հաշվանցվում են համապատասխան վերջին մարման մասնաբաժնի նկատմամբ՝ ըստ սույն Համաձայնագրի 5.1 կետով սահմանված մարման ժամանակացույցի (Մարման ժամանակացույցը), եթե KfW-ն իր հայեցողությամբ չի ընտրում մեկ այլ հաշվանցման այլընտրանք՝ առանձին դեպքերում:

5.3 Մարումը ոչ լրիվ մասհանման դեպքում: Եթե մարման մուծումը ենթակա է վճարման մինչև Վարկի լրիվ մարումը, ապա դա չի ազդում սույն Համաձայնագրի 5.1 կետով (Մարման ժամանակացույցը) նախատեսված մարման ժամանակացույցի վրա, քանի դեռ մարման ժամանակացույցով մարման ենթակա գումարն ավելի փոքր է, քան արդեն մասհանված, սակայն դեռ չվերադարձված Վարկի գումարը (Վարկի չմարված գումար): Եթե, սույն Համաձայնագրի 5.1 կետի (Մարման ժամանակացույցը) համաձայն, մարման ենթակա մուծումը գերազանցում է Վարկի չմարված գումարը, ապա այդ մարման մուծումը նվազեցվում է մինչև Վարկի չմարված գումարը և տարբերությունը հավասարաչափ բաշխվում է դեռ չվճարված մարման մուծումների միջև: Վարկի չմարված գումարը հաշվարկելիս՝ KfW-ն իրեն իրավունք է վերապահում դիտարկելու Վարկից այն մասնահանումները, որոնք

կատարվում են Վճարման ամսաթվից 45 օր կամ պակաս ժամանակաշրջանում, որպեսզի որոշի Վարկի չմարված գումարը միայն հաջորդ Վճարման ամսաթվի համար:

5.4 Վաղաժամկետ մարումը: Վաղաժամկետ մարման նկատմամբ կիրառվում են հետևյալ դրույթները.

ա) Վաղաժամկետ մարում կատարելու իրավունքը: Պայմանով, որ պահպանվել են սույն Համաձայնագրի 5.4 կետի ներքոնշյալ «բ» ենթակետից (Ծանուցումը) 5.4 կետի «ե» ենթակետով (Հաշվանցումը) նախատեսված դրույթները, Վարկառուն իրավունք ունի կատարելու Վարկի գումարների վաղաժամկետ մարում, եթե այն առնվազն մարման գումարի չափով է՝ համաձայն սույն Համաձայնագրի 5.1 կետի (Մարման ժամանակացույցը):

բ) Ծանուցումը: Սույն Համաձայնագրի 5.4 կետի «ա» ենթակետի (Վաղաժամկետ մարում կատարելու իրավունքը) համաձայն՝ Վարկի գումարի վաղաժամկետ մարման մասին Վարկառուն պետք է ծանուցի KfW-ին ոչ ուշ, քան մինչև նախատեսված վաղաժամկետ մարման ամսաթվից տասնհինգերորդ Բանկային օրը: Այդ ծանուցումը չի կարող հետ կանչվել. դրանում պետք է նշվի վաղաժամկետ մարման ամսաթիվը և գումարը, և այն պարտավորեցնում է Վարկառուին նշված գումարը նշված ամսաթվին վճարել KfW-ին:

գ) Վաղաժամկետ մարման դիմաց վճարը: Եթե Վարկառուն կատարում է Վարկի գումարի վաղաժամկետ մարում ՝

(i) Ֆիքսված տոկոսադրույքով Վարկի գումարի նկատմամբ, կամ

(ii) Փոփոխական տոկոսադրույքով Վարկի գումարի նկատմամբ՝ մինչև Տոկոսի վճարման համապատասխան ժամանակահատվածի ավարտը,

ապա նա KfW-ի պահանջով վերջինիս անմիջապես վճարում է այնքան գումար, որքան անհրաժեշտ կլինի փոխհատուցելու ցանկացած կորուստ, ծախք կամ ծախս, որը KfW-ն կկրի այդ վաղաժամկետ մարման արդյունքում

(**Վաղաժամկետ մարման դիմաց վճարը**): KfW-ն որոշում է վաղաժամկետ մարման փոխհատուցման գումարը և հաղորդում Վարկառուին: Վարկառուի պահանջով KfW-ն Վարկառուին տրամադրում է տվյալներ վաղաժամկետ մարման դիմաց գումարի վերաբերյալ՝ մինչև սույն Համաձայնագրի 5.4 կետի «բ» ենթակետով (Ծանուցումը) պահանջվող՝ անհետկանչելի ծանուցումը:

դ) Վճարման ենթակա գումարները: Սույն Համաձայնագրի 5.4 կետի «ա» ենթակետի (Վաղաժամկետ մարում կատարելու իրավունքը) համաձայն վաղաժամկետ մարման հետ միասին՝ Վարկառուն վճարում է հետևյալ գումարները.

(i) սույն Համաձայնագրի 5.4 կետի «գ» ենթակետի համաձայն վաղաժամկետ մարման արդյունքում առաջացած՝ վաղաժամկետ մարման դիմաց ցանկացած վճար (Վաղաժամկետ մարման դիմաց վճար), և

(ii) Վարկի վաղաժամկետ մարված գումարի վրա բոլոր հաշվեգրված տոկոսները, ինչպես նաև սույն Համաձայնագրի շրջանակներում չվճարված մնացած ցանկացած այլ գումարներ, որոնք հաշվեգրվել են մինչև վաղաժամկետ մարման ամսաթիվը:

ե) Հաշվանցումը: Վաղաժամկետ մարման հաշվանցման նկատմամբ 5.2 կետը (Վարկի չմասհանված գումարներ) կիրառվում է համապատասխան փոփոխություններով:

5.5 Մարման վերանայված ժամանակացույցը: Սույն Համաձայնագրի 5.3 (Մարումը ոչ լրիվ մասհանման դեպքում) և 5.4 (Վաղաժամկետ մարումը) կետերը կիրառելու դեպքում KfW-ն Վարկառուին ուղարկում է վերանայված մարման ժամանակացույցը, որը սույն Համաձայնագրի անբաժանելի մասն է և փոխարինում է մինչև այդ պահը վավեր՝ մարման ժամանակացույցին:

6. Հաշվարկներն ու վճարումները՝ ընդհանուր առմամբ

6.1 Հաշվարկը: Տոկոսի, Պարտավորության վճարի, սույն Համաձայնագրի 6.5 կետի (Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսը) համաձայն չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսի, սույն Համաձայնագրի 6.6 կետի (Միանվագ փոխհատուցում) համաձայն ժամկետանց գումարների համար միանվագ փոխհատուցման վճարումների, Չօգտագործման վճարի և Վաղաժամկետ մարման դիմաց վճարի հաշվարկման համար կիրառվում է հետևյալը.

ա) Եթե համապատասխան Վարկի գումարի համար կիրառվում է փոփոխական տոկոսադրույք, ապա տոկոսը, չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսը, ժամկետանց գումարների համար միանվագ փոխհատուցման վճարումները, Չօգտագործման վճարը և Վաղաժամկետ մարման դիմաց վճարը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով 360 օրվանից բաղկացած տարին և անցած օրերի փաստացի քանակը:

բ) Եթե համապատասխան Վարկի գումարի համար կիրառվում է ֆիքսված տոկոսադրույք, ապա տոկոսը, չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսը, ժամկետանց գումարների համար միանվագ փոխհատուցման վճարումները, Չօգտագործման վճարը և Վաղաժամկետ մարման դիմաց վճարը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով 360 օրվանից բաղկացած տարին և 30 օրվանից բաղկացած ամիսը:

գ) Պարտավորության վճարը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով 360 օրվանից բաղկացած տարին և 30 օրվանից բաղկացած ամիսը:

6.2 Վճարումը կատարելու սահմանված ամսաթիվը: Եթե սույն Համաձայնագրի շրջանակներում կատարվելիք վճարման ամսաթիվը ոչ Բանկային օր է, ապա Վարկառուն այդ վճարումը կատարում է հաջորդող Բանկային օրը: Եթե հաջորդող Բանկային օրն ընկնում է հաջորդ օրացուցային ամսին, ապա համապատասխան վճարումն իրականացվում է ընթացիկ օրացուցային ամսվա վերջին Բանկային օրը:

6.3 Հաշվեհամարը, կրեդիտագրման ժամկետը: Վարկառուն կազատվի սույն Համաձայնագրի մասով իր վճարման պարտավորություններից, եթե և այն չափով, որքանով համապատասխան գումարները կկրեդիտագրվեն KfW-ի ազատ տնօրինմանը եվրոյով՝ առանց որևէ նվազեցման և ոչ ուշ, քան Գերմանիայի Դաշնային Հանրապետության Մայնի Ֆրանկֆուրտի ժամանակով առավոտյան ժամը 10:00-ին՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Մայնի Ֆրանկֆուրտում KfW-ի IBAN DE 98 50020400 3110 1316 98 հաշվեհամարին՝ որպես լրացուցիչ հղում նշելով վճարումը կատարելու սահմանված ամսաթիվը («Հղում՝ ՏԱՐԻ ԱՄԻՍ ՕՐ»):

6.4 Վարկառուի հակընդդեմ պահանջները: Վարկառուն իրավունք չունի պահանջելու պահպանել կամ հաշվանցել որևէ իրավունք կամ որևէ այլ համեմատելի իրավունք՝ սույն Համաձայնագրի շրջանակներում վճարման պարտավորությունների հանդեպ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի իրավունքները ճանաչվում են վերջնական՝ դատական ակտով, և չեն վիճարկվում KfW-ի կողմից:

6.5 Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսը: Եթե սույն Համաձայնագրի 5.4 կետի (Վաղաժամկետ մարումը) համաձայն՝ մարման որևէ մասնաբաժին կամ վաղաժամկետ մարում KfW-ին չի կատարվել սահմանված ժամկետներում, ապա KfW-ն կարող է, առանց նախնական հիշեցման, գանձել չկատարման դեպքում հաշվարկվող տոկոս այն ժամանակահատվածի համար, որը սկսվում է վճարումը կատարելու սահմանված ամսաթվին և ավարտվում սույն Համաձայնագրի 6.3 կետում (Հաշվեհամարը, կրեդիտագրման ժամկետը) նշված KfW-ի հաշվեհամարին վճարները կրեդիտագրելու ամսաթվով՝ սույն Համաձայնագրի 4.1 կետի (Տոկոսը) համաձայն՝ KfW-ի կողմից Տոկոսի վճարման համապատասխան ժամանակահատվածի համար որոշված տարեկան Փոփոխական տոկոսադրույքից 200 բազային միավոր դրույքաչափով ավելի տոկոսով: Չկատարման դեպքում հաշվարկվող այդպիսի տոկոսն անմիջապես վճարվում է KfW-ի առաջին պահանջով: Եթե ժամկետանց գումարների վրա գոյացել են տոկոսներ սույն

Համաձայնագրի 4.1 կետի «գ» ենթակետի (Անցումը Ֆիքսված տոկոսադրույքի՝ Վարկառուի պահանջով) համաձայն Ֆիքսված տոկոսադրույքով՝ մինչև դրանց սահմանված ժամկետը, որպես այլընտրանք KfW-ն կարող է պահանջել չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսի վճարում՝ վճարումը կատարելու սահմանված ամսաթվից մինչև վճարման ամսաթիվը՝ տարեկան Ֆիքսված տոկոսադրույքից 200 բազային միավոր դրույքաչափով ավելի տոկոսով:

6.6 Միանվագ փոխհատուցումը: Ժամկետանց գումարների մասով (բացառությամբ սույն Համաձայնագրի 6.5 կետում (Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսը) նշված մարման մասնաբաժինների և վաղաժամկետ մարման) KfW-ն կարող է, առանց նախնական հիշեցման, պահանջել միանվագ փոխհատուցում վճարումը կատարելու սահմանված ամսաթվից մինչև վճարման ամսաթիվը՝ սույն Համաձայնագրի 4.1 կետի (Տոկոսը) համաձայն Տոկոսի վճարման համապատասխան ժամանակահատվածի համար KfW-ի կողմից որոշված տարեկան Փոփոխական տոկոսադրույքից 200 բազային միավոր դրույքաչափով ավելի տոկոսով: Եթե Փոփոխված տոկոսադրույքը փոխվել է Ֆիքսված տոկոսադրույքի՝ համաձայն սույն Համաձայնագրի 4.1 կետի «գ» ենթակետի (Անցումը ֆիքսված տոկոսադրույքի՝ Վարկառուի պահանջով), ապա որպես այլընտրանք KfW-ն կարող է պահանջել ժամկետանց գումարների միանվագ փոխհատուցում վճարումը կատարելու սահմանված ամսաթվից մինչև վճարման ամսաթիվը՝ այդ տարեկան Ֆիքսված տոկոսադրույքից 200 բազային միավոր դրույքաչափով ավելի տոկոսով: Միանվագ փոխհատուցումը պետք է KfW-ի առաջին պահանջով անմիջապես վճարվի: Վարկառուն իրավունք ունի ապացուցելու, որ որևէ վնաս չի առաջացել, կամ վնասները եղել են ավելի փոքր, քան միանվագ փոխհատուցումը:

6.7 Հաշվանցումը: KfW-ն իրավունք ունի ստացված վճարները հաշվանցելու սույն Համաձայնագրով կամ KfW-ի և Վարկառուի միջև կնքված այլ վարկային Համաձայնագրով վճարման ենթակա վճարումներով:

6.8 KfW-ի կողմից կատարված հաշվարկները: Բացառությամբ այն դեպքերի, երբ տեղի են ունեցել բացահայտ սխալներ, սույն Վարկային Համաձայնագրի առնչությամբ KfW-ի կողմից հաշվարկված արժեքները և վճարման ենթակա գումարների մասով հաշվարկները համարվում են բավարար ապացույցներ (Anscheinsbeweis):

7. Գերմանիայի Դաշնային Հանրապետության երաշխավորությունը

KfW-ն կունենա սույն Համաձայնագրի շրջանակներում վճարման պահանջներ, որոնք երաշխավորված կլինեն Գերմանիայի Դաշնային Հանրապետության կողմից՝ նախքան առաջին մասհանումը:

8. Անօրինականությունը

Եթե սույն Համաձայնագրով KfW-ի համար սահմանված որևէ պարտավորության կատարումը կամ Վարկի ֆինանսավորումը կամ սպասարկումը կիրառվող որևէ իրավազորության շրջանակներում KfW-ի համար դառնում է անօրինական, ապա KfW-ի կողմից Վարկառուին ծանուցելու պահից՝

ա) անմիջապես չեղարկվում է KfW-ի պարտավորությունը, և

բ) Վարկառուն պարտավոր է ամբողջությամբ մարել Վարկը Տոկոսի վճարման ժամանակահատվածի վերջին օրը, ինչի մասին KfW-ն ծանուցում է Վարկառուին, կամ եթե ավելի վաղ, ապա Վարկառուին ուղարկած ծանուցագրում KfW-ի կողմից նշված օրը (որը չի կարող լինել ավելի վաղ, քան օրենքով թույլատրված որևէ կիրառելի արտոնյալ ժամկետի վերջին օրը):

Կասկածներից խուսափելու համար սույն կետով ցանկացած չեղարկման նկատմամբ կիրառվում է 2.6 կետը (Չօգտագործման վճարը), իսկ սույն կետով Վարկի ցանկացած մարում համարվում է վաղաժամկետ մարում և դրա նկատմամբ կիրառվում են 5.4 կետի «գ» (Վաղաժամկետ մարման դիմաց վճարը) և «դ» (Վճարման ենթակա գումարները) ենթակետերով սահմանված դրույթները:

9. Ծախսերն ու պետական գանձումները

9.1 Պահումների կամ նվազեցումների բացառումը: Վարկառուն սույն Համաձայնագրի շրջանակում վճարումները կատարում է առանց հարկերի, այլ պետական գանձումների կամ ծախսերի գծով որևէ նվազեցման: Եթե Վարկառուն պարտավոր է օրենքով կամ այլ պատճառներով իրականացնել որևէ նման նվազեցում կամ պահում վճարումներից, ապա Վարկառուի կողմից արվող վճարումներն ավելացվում են այն չափով, որն անհրաժեշտ կլինի, որպեսզի հարկերի և գանձումների նվազեցումից հետո KfW-ն ամբողջությամբ ստանա սույն Համաձայնագրով վճարման ենթակա գումարը:

9.2 Ծախսերը: Վարկառուն կրում է Վարկի մասհանման և մարման առնչությամբ առաջացած բոլոր ծախսերն ու ծախքերը, մասնավորապես՝ ուղարկման և փոխանցման հետ կապված ծախսերը (ներառյալ՝ փոխարկման վճարները), ինչպես նաև սույն Համաձայնագրի սպասարկման և կատարման ապահովման հետ կապված և սույն Համաձայնագրի հետ առնչվող ցանկացած այլ փաստաթղթի, ինչպես նաև դրանից բխող բոլոր իրավունքների առնչությամբ առաջացած բոլոր ծախսերն ու ծախքերը:

9.3 Հարկերը և այլ գանձումներ: Վարկառուն կրում է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունից դուրս սույն Համաձայնագրի կնքման և իրականացման առնչությամբ գոյացող հարկերը և այլ պետական գանձումները: Եթե KfW-ն նախապես վճարում է այդ հարկերը կամ գանձումները, ապա Վարկառուն KfW-ի պահանջով, առանց ուշացման, փոխանցում է այդ գումարները սույն Համաձայնագրի 6.3 կետում (Հաշվեհամարը, կրեդիտագրման ժամկետը) նշված KfW-ի հաշվեհամարին կամ KfW-ի կողմից նշված այլ հաշվեհամարի:

9.4 Ավելացած ծախսերը: Վարկառուն KfW-ի պահանջով անմիջապես KfW-ին ամբողջ ծավալով վերադարձնում է ցանկացած **Ավելացած ծախս** (ըստ ստորև բերված սահմանման), որը կարող է առաջանալ Վարկի առնչությամբ՝ հետևյալ պատճառներով.

ա) իրավաբանական պահանջների, որոնք պետք է կատարի KfW-ն, կամ այդ պահանջների մեկնաբանության կամ կիրառման հետ կապված ցանկացած

փոփոխություն՝ սույն Համաձայնագրի կնքումից հետո,

բ) կենտրոնական բանկի, բանկային ոլորտի կամ կապիտալի շուկայի վերահսկող մարմնի, ֆինանսական կամ իշխանության այլ մարմնի կողմից ներկայացվող պահանջների բավարարում, որոնք ուժի մեջ են մտել սույն Համաձայնագրի կնքումից հետո:

«Ավելացած ծախսերն» են՝

i) KfW-ի լրացուցիչ կամ ավելացած ծախսերը,

ii) KfW-ի սեփական կապիտալի եկամտաբերության պակասելը, կամ

iii) Վարկառուի կողմից KfW-ին վճարման ենթակա գումարի պակասելը,

պայմանով, որ այդ ծախսերը և պակասելն առաջացել են Վարկի առնչությամբ: KfW-ի եկամտից կամ օգուտներից Գերմանիայում գանձվող հարկերը հաշվի չեն առնվում Ավելացած ծախսերը սահմանելիս:

KfW-ն տեղեկացնում է Վարկառուին Ավելացած ծախսերի գումարի և դրանց առաջացման պատճառների մասին և Վարկառուի պահանջով ներկայացնում է վերադարձման ենթակա գումարի հաշվարկը՝ ողջամիտ մանրամասներով:

10. Հատուկ պարտավորություններ

10.1 Ծրագրի իրականացումը և հատուկ տեղեկությունները: Վարկառուն՝

ա) նախապատրաստում, իրականացնում, գործարկում և սպասարկում է Ծրագիրը՝ հիմնավոր ֆինանսական և տեխնիկական գործելակերպերին, բնապահպանական և սոցիալական ստանդարտներին համապատասխան և ըստ էության՝ Վարկառուի և KfW-ի միջև համաձայնեցված Ծրագրի հայեցակարգի համաձայն,

բ) անհրաժեշտության դեպքում և KfW-ի համար ընդունելի պայմաններով և

դրույթներով՝ անմիջապես մատչելի է դարձնում Ծրագրի իրականացման և Ծրագրի շինությունների օգտագործման և պահպանման համար պահանջվող միջոցները, շինությունները, ծառայությունները՝ ի լրումն Վարկից առաջացող հասույթների,

գ) ապահովում է, որ Ծրագրի իրականացման հետ առնչվող իր ստորաբաժանումների և գործակալությունների աշխատանքներն իրականացվեն և համակարգվեն վարչական հիմնավոր քաղաքականություններին և ընթացակարգերին համապատասխան,

դ) վարում է հաշվապահական գրքեր և գրանցումներ, կամ պահում է այնպիսի հաշվապահական գրքեր և գրանցումներ, որոնք միանշանակ ցույց կտան Ծրագրի իրականացումը և առաջընթացը,

ե) հնարավորություն է տալիս KfW-ին և նրա գործակալներին ցանկացած պահի ստուգելու այդ գրքերը և գրանցումները, ինչպես նաև Ծրագրի իրականացման հետ առնչվող բոլոր մնացած փաստաթղթերը,

զ) KfW-ին տրամադրում է ցանկացած և ամբողջ տեղեկությունները և գրանցումները Ծրագրի և դրա հետագա առաջընթացի վերաբերյալ՝ KfW-ի պահանջով,

է) իր նախաձեռնությամբ անմիջապես ծանուցում է KfW-ին ցանկացած և բոլոր այն հանգամանքների մասին, որոնք խոչընդոտում կամ լրջորեն վտանգում են Ծրագրի իրականացումը կամ նպատակը,

ը) իր նախաձեռնությամբ և առանց անհարկի ուշացման՝ տեղեկացնում է KfW-ին ցանկացածև բոլոր այն հանգամանքների մասին, որոնք խոչընդոտում կամ լրջորեն վտանգում են Ծրագրի նպատակի իրագործումը:

10.2 Ծրագրի իրականացման մանրամասները: KfW-ն և Վարկառուն, այս առումով ի դեմս Ծրագրի իրականացման գրասենյակի, սույն Համաձայնագրի 10.1 կետի մանրամասները սահմանում են Առանձին համաձայնագրով:

10.3 Համապատասխանության մասով պարտավորությունները: Վարկառուն պարտավորվում է ողջ ընթացքում պահպանել հավելված 3-ում (Համապատասխանության մասով պարտավորություններ) սահմանված պարտավորությունները:

10.4 Ծրագրի մոնիթորինգը: Վարկառուն և KfW-ն ցանկացած կողմի պահանջով, ժամանակ առ ժամանակ խորհրդակցում և կարծիքներ են փոխանակում ծրագրի զարգացման և ոլորտային բարեփոխումների իրականացման գործընթացում գրանցված առաջընթացի վերաբերյալ: Յուրաքանչյուր նման խորհրդատվությունից և կարծիքներ փոխանակելուց առաջ, Ծրագրի իրականացման գրասենյակը KfW-ի դիտարկմանը և մեկնաբանություններին է ներկայացնում Ծրագրի իրականացման գործընթացում գրանցված առաջընթացի վերաբերյալ հաշվետվություն՝ այն մանրամասներով, որոնք KfW-ն ողջամտորեն կպահանջի:

10.5 Համարժեք դասակարգումը: Վարկառուն երաշխավորում է, որ սույն Համաձայնագրով իր պարտավորությունները կսպասարկվեն մյուս այլ չապահովված և ոչ սուբորդինացված պարտավորություններին (**Արտաքին պարտք**) առնվազն համարժեք, և Վարկառուն, օրենքով թույլատրելի սահմաններում, կապահովի այդ համարժեքությունը նաև բոլոր հետագա չապահովված և ոչ սուբորդինացված պարտավորությունների (Արտաքին պարտք) համեմատ: Սույն Համաձայնագրում «Արտաքին պարտք» նշանակում է Վարկառուի այն պարտավորությունը, որը՝

(i) կարգավորվում է Վարկառուի իրավական համակարգից տարբեր՝ այլ իրավական համակարգով,

(ii) ենթակա է վճարման Վարկառուի երկրի արժույթից տարբեր՝ այլ արժույթով, կամ

(iii) ենթակա է վճարման անձի, որի գրանցման, բնակության կամ ռեզիդենտության վայրը կամ գլխամասային գրասենյակը կամ

գործունեության հիմնական վայրը գտնվում է Վարկառուի երկրից դուրս:

10.6 Ապահովման իրավունքը: Եթե Վարկառուն որևէ երրորդ կողմի շնորհում է ապահովման կամ այլ իրավունք, որը հնարավորություն է տալիս այդ երրորդ կողմին պահանջելու Վարկառուի ակտիվների, գույքի կամ եկամուտների նկատմամբ պահանջների արտոնյալ բավարարում, ապա KfW-ն կարող է իր համաձայնությունը պայմանավորել այն հանգամանքով, որ Վարկառուն KfW-ին նույնպես տրամադրի (լրացուցիչ) նույն մակարդակի ապահովում, որը հավասարաչափ և համարժեքորեն կապահովի KfW-ի պահանջները Վարկառուի նկատմամբ՝ սույն Վարկային համաձայնագրի շրջանակներում:

11. Համաձայնագրի դադարեցումը

11.1 Դադարեցման պատճառները: KfW-ն կարող է իրագործել սույն Համաձայնագրի 11.2 կետով (Դադարեցման հիմքեր առաջանալու իրավական հետևանքները) սահմանված իր իրավունքները՝ հիմնավոր հիմք հանդիսացող ցանկացած իրադարձություն առաջանալու դեպքում (Wichtiger Grund): Մասնավորապես, այդպիսի իրադարձություններ են՝

ա) Վարկառուն ժամանակին չի կատարում KfW-ի հանդեպ իր վճարային պարտավորությունները,

բ) խախտվում են սույն Համաձայնագրով կամ Առանձին համաձայնագրով, ինչպես նաև սույն Համաձայնագրի ցանկացած իրավաբանորեն պարտադիր լրացուցիչ համաձայնագրով նախատեսված պարտավորությունները,

գ) սույն Վարկային համաձայնագիրը կամ դրա որևէ մաս այլևս պարտադիր չէ Վարկառուի համար կամ չի կարող հարկադիր կարգով կատարվել Վարկառուի հանդեպ,

դ) պարզվել է, որ որևէ հայտարարություն, հավաստում, տեղեկություն,

ներկայացում կամ երաշխիք, որը KfW-ն համարել է էական վարկը տրամադրելու և սպասարկելու համար, կեղծ է, ապակողմնորոշող կամ ոչ ամբողջական,

ե) տեղի են ունենում այլ արտակարգ իրադարձություններ, որոնք հետաձգում կամ խոչընդոտում են սույն Համաձայնագրի շրջանակներում պարտավորությունների կատարումը,

զ) Վարկառուն չի կարողանում ապացուցել, որ Վարկի միջոցներն օգտագործվել են սահմանված նպատակների իրականացման համար,

է) Վարկառուն դադարում է իր վճարումները վարկատուներին, անվճարունակ է կամ սկսում է բանակցություններ իր մեկ կամ մի քանի վարկատուների հետ՝ մորատորիումի, չվճարված պարտքի մասով պարտավորություններից ազատելու, վճարումները հետաձգելու կամ պարտքի մասով սպասարկումը դադարեցնելու վերաբերյալ:

11.2 Դադարեցման հիմքեր առաջանալու իրավական հետևանքները: Սույն Համաձայնագրի 11.1 կետում (Դադարեցման պատճառները) նշված իրադարձություններից որևէ մեկը տեղի ունենալու դեպքում, KfW-ն կարող է անմիջապես դադարեցնել սույն Համաձայնագրի շրջանակներում մասհանումները: Եթե այդ իրադարձությունը չի կարգավորվում հինգ օրվա ընթացքում (սույն Համաձայնագրի 11.1 կետի «ա» ենթակետի դեպքում) կամ սույն Համաձայնագրի 11.1 կետով (Դադարեցման պատճառները) սահմանված մյուս բոլոր դեպքերում, KfW-ի կողմից սահմանված ժամկետներում, որն, այնուամենայնիվ, պետք լինի առնվազն 30 օր, KfW-ն կարող է ամբողջությամբ կամ մասամբ դադարեցնել սույն Համաձայնագիրը, ինչի հետևանքով KfW-ի՝ սույն Համաձայնագրով նախատեսված պարտավորությունները դադարում են, և այն կարող է պահանջել Վարկի չմարված գումարի ամբողջությամբ կամ մասամբ մարում՝ սույն Համաձայնագրի շրջանակներում կուտակված տոկոսների և վճարման ենթակա մյուս գումարների հետ: Արագացված կարգով վճարման ենթակա գումարների նկատմամբ սույն

Համաձայնագրի 6.5 (Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսը) և 6.6 (Միանվագ փոխհատուցումը) կետերը կիրառվում են համապատասխան փոփոխություններով:

11.3 Պատճառված վնասների համար փոխհատուցումը: Սույն Համաձայնագիրը մասամբ կամ ամբողջությամբ դադարեցվելու դեպքում, Վարկառուն վճարում է վարկի Չօգտագործման վճար՝ սույն Համաձայնագրի 2.6 կետին (Չօգտագործման վճարը) համապատասխան, և (կամ) Վաղաժամկետ մարման վճար՝ սույն Համաձայնագրի 5.4 կետի «գ» ենթակետին (Վաղաժամկետ մարման վճարը) համապատասխան:

12. Ներկայացուցչությունը և հայտարարությունները

12.1 Վարկառուին ներկայացնելը: Սույն Համաձայնագրի կնքման ժամանակ Վարկառուին ներկայացնում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը և նրա կողմից KfW-ին ներկայացվող անձինք՝ նրանց լիազորված ստորագրությունների նմուշներով, որոնք հաստատվել են նախարարի կողմից: Ծրագրի և սույն Համաձայնագրի իրականացման ժամանակ Վարկառուին ներկայացնելու են Շրջակա միջավայրի նախարարը և նրա կողմից KfW-ին ներկայացվող անձինք: Ներկայացուցչական լիազորությունները չեն դադարում՝ մինչև KfW-ն չստանա ներկայացուցչությունը չեղյալ համարելու մասին հստակ ծանուցում Վարկառուի ներկայացուցչի կողմից:

12.2 Հասցեները: Սույն Համաձայնագրի հետ կապված ծանուցումները կամ հայտարարությունները պետք է արվեն գրավոր: Դրանք պետք է ուղարկվեն բնօրինակով, բացառությամբ մասհանման հայտերի, որոնք կարող են ուղարկվել ֆաքսով: Համաձայնագրի հետ կապված ցանկացած ծանուցում կամ հայտարարություն պետք է ուղարկվի հետևյալ հասցեներով.

KfW-ին՝	KfW

Փոստային ինդեքս 11 11 41

60046 Մայնի Ֆրանկֆուրտ, Գերմանիա

Ֆաքս՝ +49 69 7431-2944

Վարկառուին՝ Ֆինանսների նախարարություն

Մելիք Ադամյան փ. 1

0010 Երևան,

Հայաստանի Հանրապետություն

Ֆաքս. +37 411 800 132

13. Ծրագրին առնչվող տեղեկությունների հրապարակումը և փոխանցումը

13.1 Ծրագրին առնչվող տեղեկությունների հրապարակումը KfW-ի կողմից: Զարգացման համագործակցության մեջ առավելագույն թափանցիկության և արդյունավետության միջազգայնորեն ընդունելի սկզբունքներին համապատասխանելու համար, KfW-ն հրապարակում է ընտրովի տեղեկություններ (այդ թվում բնապահպանական և սոցիալական դասակարգման արդյունքները և գնահատումը, ինչպես նաև նախորդ գնահատման հաշվետվությունները) Ծրագրի և դրա ֆինանսավորման մասին՝ նախապայմանագրային բանակցությունների ընթացքում, Ծրագրի հետ առնչվող համաձայնագրի (համաձայնագրերի) իրականացման ընթացքում և հետպայմանագրային փուլում (այսուհետ հիշատակվում է որպես Ամբողջ **ժամանակահատված**):

Տեղեկությունները պարբերաբար հրապարակվում են KfW Զարգացման բանկի կայքում (http://transparenz.kfw-entwicklungsbank.de/):

Տեղեկությունների հրապարակումը (KfW-ի կամ երրորդ կողմերի կողմից՝ ներքոնշյալ 13.3 կետին (Ծրագրին առնչվող տեղեկությունների փոխանցումը

երրորդ կողմերին և հրապարակումը վերջիններիս կողմից) համապատասխան) Ծրագրի և դրա ֆինանսավորման մասին չի ներառում որևէ պայմանագրային կամ այլ ֆինանսապես զգայուն կամ բիզնեսի հետ առնչվող մանրամասն տեղեկություն Ծրագրին մասնակցող կողմերի կամ դրա ֆինանսավորման մասին, ինչպես օրինակ՝

ա) ներքին ֆինանսական տվյալներ,

բ) բիզնեսի ռազմավարություն,

գ) ներքին կորպորատիվ ուղեցույցներ և հաշվետվություններ,

դ) անձնական տվյալներ ֆիզիկական անձանց մասին,

ե) կողմերի ֆինանսական վիճակի մասին KfW-ի ներքին դասակարգումը:

13.2 Ծրագրին առնչվող տեղեկությունների փոխանցումը երրորդ կողմերին: KfW-ն ստորև նշված կազմակերպություններին տրամադրում է ընտրովի տեղեկություններ Ծրագրի և դրա ֆինանսավորման մասին Ամբողջ ժամանակահատվածի ընթացքում՝ մասնավորապես թափանցիկությունն ու արդյունավետությունն ապահովելու համար.

ա) KfW-ի դուստր ընկերություններ,

բ) Գերմանիայի Դաշնային Հանրապետություն և դրա իրավասու մարմինները, իշխանության մարմինները, հիմնարկները, գործակալությունները կամ կազմակերպությունները,

գ) այլ իրականացնող կազմակերպություններ, որոնք ներգրավված են Գերմանիայի երկկողմանի զարգացման ծրագրերում, հատկապես Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH-ը,

դ) միջազգային կազմակերպություններ, որոնք հավաքում են վիճակագրական տվյալներ, ինչպես նաև դրանց անդամները, հատկապես Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) և դրա անդամները:

13.3 Ծրագրին առնչվող տեղեկությունների փոխանցումը երրորդ կողմերին և հրապարակումը վերջիններիս կողմից: Բացի այդ, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը խնդրել է KfW-ին Ամբողջ ժամանակահատվածի ընթացքում տրամադրել Ծրագրի և դրա ֆինանսավորման մասին ընտրովի տեղեկություններ ստորև նշված կազմակերպություններին, որոնք հրապարակում են բաժինները՝ ըստ իրենց նպատակների.

ա) Գերմանիայի Դաշնային Հանրապետություն՝ «Միջազգային օգնության թափանցիկության նախաձեռնության» նպատակների համար (http://www.bmz.de/de/was_wir_machen/wege/transparenz-fuer-mehr-Wirksamkeit/index.html),

բ) Գերմանիայի առևտրի և ներդրումների գործակալություն (GTAI)՝ շուկայական տեղեկատվության նպատակներով (http://www.gtai.de/GTAI/Navigation/DE/trade.FOO),

գ) ՏՀԶԿ՝ զարգացման շրջանակներում ֆինանսական հոսքերի մասին հաշվետվողականության նպատակների համար (http://stats.oecd.org/),

դ) Զարգացման էվոլյուցիայի գերմանական ինստիտուտ (DEval)՝ գերմանական զարգացման համագործակցությունն ընդհանուր առմամբ գնահատելու և թափանցիկությունն ու արդյունավետությունն ապահովելու համար (http://www.deval.org/de/):

13.4 Ծրագրին առնչվող տեղեկությունների փոխանցումն այլ երրորդ կողմերի (այդ թվում դրանց հրապարակումը՝ վերջիններիս կողմից): KfW-ն իրեն իրավունք է վերապահում Ամբողջ ժամանակահատվածի ընթացքում փոխանցելու տեղեկություններ Ծրագրի և դրա ֆինանսավորման մասին՝ այլ երրորդ կողմերի (այդ թվում հրապարակման նպատակով)՝ իրավաչափ շահերը պաշտպանելու համար:

KfW-ն տեղեկությունները չի փոխանցում երրորդ կողմերին, եթե տեղեկությունները չփոխանցելու՝ Վարկառուի իրավաչափ շահերը գերակշռում են փոխանցելու դեպքում KfW-ի շահերին: Վարկառուի իրավաչափ շահերը ներառում են, մասնավորապես, 13.1 կետում (Ծրագրին առնչվող տեղեկությունների հրապարակումը KfW-ի կողմից) նշված զգայուն տեղեկությունների գաղտնիությունը, որոնք հանվում են հրապարակվող մասից:

Բացի այդ, KfW-ն իրավունք ունի տեղեկություններ փոխանցելու երրորդ կողմերին, եթե դա օրենքով կամ նորմատիվ կարգավորումներով սահմանված պահանջ է, կամ անհրաժեշտ է հայցապահանջները կամ այլ օրինական իրավունքները հաստատելու կամ պաշտպանելու համար՝ դատարանում կամ վարչական վարույթի շրջանակներում:

14. Ընդհանուր դրույթներ

14.1 Բանկային օր: Սույն Համաձայնագրում «**Բանկային օր**» հղումը նշանակում է ցանկացած օր, բացի շաբաթ և կիրակի օրերից, երբ Մայնի Ֆրանկֆուրտի (Գերմանիայի Դաշնային Հանրապետություն), Նյու Յորքի (ԱՄՆ) և Լոնդոնի (ՄԹ) առևտրային բանկերը բաց են ընդհանուր բիզնես գործունեություն ծավալելու համար:

14.2 Կատարման վայր: Սույն Համաձայնագրով սահմանված բոլոր պարտավորությունների կատարման վայր է համարվում Գերմանիայի Դաշնային

Հանրապետության Մայնի Ֆրանկֆուրտ քաղաքը: Սույն Համաձայնագրով սահմանված բոլոր ԱՄՆ դոլարով վճարման պարտավորությունների կատարման վայր է համարվում ԱՄՆ-ի Նյու Յորք քաղաքը, իսկ մնացած բոլոր պարտավորությունների համար՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Մայնի Ֆրանկֆուրտ քաղաքը:

14.3 Մասնակի անվավերությունը և բացերը: Եթե սույն Համաձայնագրի որևէ դրույթ անվավեր է կամ դառնում է այդպիսին, կամ եթե սույն Համաձայնագրի որևէ դրույթում առկա են բացեր, ապա դա չի ազդում սույն Համաձայնագրի մյուս դրույթների վավերության վրա: Սույն Համաձայնագրի կողմերը ցանկացած անվավեր դրույթ փոխարինում են իրավաբանորեն վավեր դրույթով, որն իր իմաստով և նպատակով հնարավորինս մոտ է անվավեր դրույթին: Կողմերը պետք է լրացնեն դրույթներում առկա ցանկացած բաց՝ իրավաբանորեն վավեր դրույթով, որն իր իմաստով և նպատակով հնարավորինս մոտ է սույն Համաձայնագրին:

14.4 Գրավոր ձևը: Սույն Համաձայնագրի ցանկացած փոփոխություն և լրացում պետք է կատարվի (i) վավերացմանն ու հաստատմանը առնչվող կիրառելի պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կիրառելի օրենքներին համապատասխան և (ii) գրավոր:

Սույն Համաձայնագրի ցանկացած փոփոխություն և լրացում, որը չի ավելացնի Վարկառուի պարտավորությունները սույն Համաձայնագրի ներքո կամ ցանկացած այլ փոփոխություն և լրացում, որը չի պահանջում վավերացում կամ հաստատում (ինչպես կիրառելի է) Հայաստանի Հանրապետության կիրառելի օրենքներին համապատասխան, կարող է կատարվել (որպես նվազագույն պահանջ) միայն գրավոր: Ցանկացած նման փոփոխություն պետք է ուժի մեջ մտնի վերջին կողմի կողմից ստորագրման օրը: Տարընկալումներից խուսափելու համար, սույն Համաձայնագրի ցանկացած փոփոխություն, որը չի կատարվի առնվազն գրավոր, պետք է համարվի առոչինչ:

Կողմերը կարող են գրավոր ձևին ներկայացվող պահանջից հրաժարվել բացառապես գրավոր եղանակով:

14.5 Հանձնարարումը: Վարկառուն չի կարող հանձնարարել, փոխանցել, զիջել կամ գրավադրել սույն Վարկային Համաձայնագրից բխող որևէ պահանջ:

14.6 Կիրառելի օրենքը: Սույն Համաձայնագիրը կարգավորվում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության իրավունքով:

14.7 Վաղեմության ժամկետը: Սույն Համաձայնագրի շրջանակներում KfW-ի բոլոր պահանջների ժամկետն ավարտվում է հինգ տարի հետո՝ սկսած այն տարվա ավարտից, երբ առաջացել է այդ պահանջը և երբ KfW-ին հայտնի են դարձել նման պահանջի հանգամանքները կամ դրանք կարող էին հայտնի դառնալ՝ առանց կոպիտ անփութության:

14.8 Անձեռնմխելիությունից հրաժարվելը: Այնքանով, որքանով Վարկառուն կարող է այժմ կամ հետագայում որևէ իրավազորության շրջանակներում պահանջել իր կամ իր ակտիվների անձեռնմխելիությունը դատական կարգով հետապնդումից, դատական որոշումների իրականացումից, կալանքից և այլ իրավական գործընթացներից և այնքանով, որքանով այդ իրավազորության շրջանակներում կարող է Վարկառուին և նրա ակտիվներին տրամադրվել անձեռնմխելիություն, Վարկառուն սույնով՝ առանց հետկանչման իրավունքի, համաձայնվում է հրաժարվել այդպիսի անձեռնմխելիությունից՝ այն պահանջների մասով, որոնք բխում են սույն Վարկային պայմանագրից կամ կապված են դրա հետ՝ այդ իրավազորության օրենքներով թույլատրվող առավելագույն ծավալով:

14.9 Իրավական վեճերը

ա) Արբիտրաժը: Սույն Վարկային համաձայնագրից բխող կամ դրա հետ կապված ցանկացած վեճ բացառապես և վերջնականորեն լուծվում է արբիտրաժային տրիբունալի կողմից: Այս առնչությամբ կիրառվում է հետևյալը.

(i) Արբիտրաժային տրիբունալը պետք է բաղկացած լինի մեկ կամ երեք արբիտրներից, որոնք պետք է նշանակվեն և գործեն Առևտրի միջազգային պալատի (ԱՄՊ) արբիտրաժային կանոնների համաձայն, որոնք կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխության ենթարկվել.

(ii) Արբիտրաժային վարույթը պետք է իրականացվի Մայնի Ֆրանկֆուրտ քաղաքում: Վարույթի լեզուն անգլերենն է:

14.10 Ուժի մեջ մտնելը: Սույն համաձայնագիրը ուժի մեջ չի մտնի, մինչև չապահովվեն հետևյալ պայմանները՝

ա) Սույն Վարկային Համաձայնագիրը պատշաճ կերպով ստորագրվել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի և KfW-ի կողմից,

բ) Սույն Վարկային Համաձայնագիրը վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից,

գ) Վավերացումը հրապարակվել է www.parliament.am կայքում,

դ) Վարկառուն, վավերացումից անմիջապես հետո, KfW-ին տրամադրել է գրավոր հավաստում առ այն, որ Վարկային Համաձայնագիրը պատշաճ կերպով վավերացվել է կիրառվող օրենքներին համապատասխան:

Եթե վարկային համաձայնագիրը ուժի մեջ չմտնի վերջին կողմի կողմից ստորագրման ամսաթվին հաջորդող վեց ամսվա ընթացքում, KfW-ն կարող է, վեցամսյա ժամկետի ավարտին հաջորդող օրը մինչև ուժի մեջ մտնելը, միակողմանի հրաժարվել սույն վարկային համաձայնագրից՝ այդպիսով դադարեցնելով ժամանակավոր ուժի մեջ չմտնելը՝ գրավոր կերպով ծանուցելով Վարկառուին:

Կատարված է 2 բնօրինակով՝ անգլերեն լեզվով:

Մայնի Ֆրանկֆուրտ, _____ Երևան, _____

KfW-ի անունից՝

Հայաստանի Հանրապետության անունից՝

Հայաստանի Հանրապետության

Ֆինանսների նախարարություն

_____

Անուն՝

Պաշտոն՝

_____

Անուն՝

Պաշտոն՝

_____

Անուն՝

Պաշտոն՝

Հավելված 1

Տոկոսի փոփոխման հայտի ձև

KfW

Postfach 11 11 41

60046 Մայնի Ֆրանկֆուրտ

Գերմանիային Դաշնային Հանրապետություն

Տոկոսի փոփոխման հայտ

Ծրագրի հակիրճ նկարագրություն՝ _____

Վարկային համաձայնագրի ամսաթիվ՝ _____

Վարկի գումար՝ _____

Վարկային համաձայնագրի 4.1 կետի «գ» ենթակետի (ii) մասին (KfW-ին ծանուցելը) համապատասխան՝ խնդրում ենք վերոգրյալ Վարկի տոկոսադրույքը Փոփոխական տոկոսադրույքից փոխել Ֆիքսված տոկոսադրույքի՝ Ուժի մեջ մտնելու ամսաթվից _____, որը համարվում է Վճարման ամսաթիվ՝ համաձայն Վարկային համաձայնագրի 4.3 կետի (Վճարման ամսաթվերը):

_____, _____

(Վայր) (Ամսաթիվ)

_____

(Վարկառուի ստորագրությունը)

<u>Հավելված 2</u>

Վարկառուի իրավախորհրդատուի իրավաբանական եզրակացության ձև

Խնդրում ենք համապատասխանաբար փոփոխել՝ «Երկրի Հանրապետություն»/«Երկիր»

KfW-ին

_____

(ամսաթիվ)

Բաժին [_____]

Ուղղված՝ [_____]

Palmengartenstrasse 5 - 9

Postfach 11 11 41

60325 Մայնի Ֆրանկֆուրտ

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն

Վարկային համաձայնագիր՝ կնքված KfW-ի և Հայաստանի Հանրապետության (Վարկառուի) միջև՝ --------ամսաթիվ, __.000.000 եվրոն չգերազանցող ընդհանուր

գումարով:

Հարգելի պարոնայք,

Ես՝ լինելով Հայաստանի Հանրապետության [արդարադատության նախարար] [իրավախորհրդատու] [_____ (խնդրում ենք նշել նախարարությունը կամ այլ իրավասու մարմինը) իրավաբանական բաժնի պետ], գործել եմ այդ լիազորությունների շրջանակներում՝ ----թ-ին կնքված վարկային համաձայնագրի (Վարկային համաձայնագիր) առնչությամբ, որը կնքվել է Վարկառուի և Ձեր միջև՝ Ձեր կողմից Վարկառուին —.000.000 եվրո ընդհանուր գումարը չգերազանցող վարկ տրամադրելու կապակցությամբ:

1. <u>Ուսումնասիրված փաստաթղթերը</u>

Իմ կողմից ուսումնասիրվել են՝

1.1 Վարկային համաձայնագրի ստորագրված բնօրինակները,

1.2 Վարկառուի հիմնադիր փաստաթղթերը, այդ թվում՝

ա) Պետության սահմանադրությունը, որն ընդունվել է ———թ-ին և հրապարակվել է ————, թիվ————, էջ——՝ փոփոխություններով.

բ) ———— Օրենք(ներ), թիվ——— ընդունված ————————-ին, հրապարակված ————————ում, թիվ———, էջ——՝ փոփոխություններով [նշել օրենքները, եթե կան այդպիսիք (օրինակ՝ բյուջեի վերաբերյալ օրենքներ), որոնք վերաբերում են Հայաստանի Հանրապետության կողմից արված փոխառություններին].

գ) ———————— [նշել այլ փաստաթղթեր, օրինակ՝ Հայաստանի պետական կառավարման կամ վարչական մարմինների կողմից ընդունված որոշումներ կամ հրամաններ, որոնք ընդհանուր առմամբ վերաբերում են Հայաստանի կողմից կնքված վարկային համաձայնագրերին կամ սույն Վարկային համաձայնագրին], և

դ) Ֆինանսական համագործակցության համաձայնագիրը՝ կնքված Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև ———թ-ին (Համագործակցության համաձայնագիր)

և այլ նման օրենքներ, կանոնակարգեր, ակտեր, գրառումներ, գրանցումներ և փաստաթղթեր, որոնք իմ կողմից համարվել են ուսումնասիրության համար անհրաժեշտ կամ ցանկալի: Բացի այդ, իմ կողմից կատարվել են հետազոտություններ, որոնք ես անհրաժեշտ կամ ցանկալի եմ համարել՝ սույն իրավաբանական կարծիքը տրամադրելու համար:

2. <u>Կարծիք</u>

Վարկային համաձայնագրի —— կետի նպատակներով, Հայաստանի Հանրապետության գործող օրենքների համաձայն, հայտնում եմ հետևյալ իրավաբանական կարծիքը.

2.1 Համաձայն Սահմանադրության հոդված ----ի դրույթների/-------օրենքի դրույթների ———————— [նշել համապատասխան օրենքները], Վարկառուն իրավունք ունի կնքելու սույն Վարկային համաձայնագիրը և ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցները՝ Վարկային համաձայնագրի կնքումը, հանձնումն ու իրականացումը թույլատրելու համար, մասնավորապես համաձայն՝

ա) Օրենքի (ների) թիվ——՝ ընդունված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ————թ-ին, որը վավերացնում/ հաստատում է Վարկառուի կողմից [նշել անվանումը] Վարկային համաձայնագրի ստորագրումը, հանձնումն ու իրականացումը.

բ) Որոշման (ների) թիվ ———————— ընդունված Կառավարության / պետության վարկային հանձնաժողովի կողմից ————թ-ին [նշել Հայաստանի համապատասխան պետական կառավարման կամ վարչական մարմինների անվանումները].

գ) ———————————— [նշել այլ որոշումներ, հրամաններ և այլն]:

2.2 Տկն/պրն ———————————————— (և տկն/պրն ———————————————) պատշաճ ձևով լիազորված է (են) ———————————— կողմից [օրենքով՝ ելնելով իր զբաղեցրած պաշտոնից (որպես ————ի նախարար / որպես —), կառավարության ————որոշմամբ, ————ին տրված լիազորագրի հիման և այլն] Վարկառուի անունից միանձնյա / համատեղ ստորագրել Վարկային համաձայնագիրը: Տկն/պրն ———————————— (և տկն/պրն ————————————) կողմից ստորագրված Վարկային համաձայնագիրը պատշաճ ձևով իրականացվել է Վարկառուի կողմից և հանդիսանում է Վարկառուի համար իրավաբանորեն պարտադիր պարտավորություն, որի իրականացումը պետք է ապահովվի

համաձայն օրենքի դրույթների:

[Այլընտրանք 1՝ բաժին 2.3-ի համար, որը կիրառվում է, եթե, ի լրումն բաժին 2.1 և բաժին 2.2-ում սահմանված փաստաթղթերի, անհրաժեշտ է ձեռք բերել որոշ պաշտոնական թույլտվություններ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների]:

2.3 Վարկառուի կողմից Վարկային համաձայնագրի կնքման և իրականացման համար ձեռք են բերվել հետևյալ պաշտոնական հաստատումները, թույլտվությունները, լիցենզիաները, գրանցումները և (կամ) համաձայնությունները, որոնք ամբողջությամբ ուժի մեջ են և շարունակաբար գործում են՝ ներառյալ ստացման ենթակա գումարների ձեռքբերումը և փոխանցումը KfW-ին՝ սույն համաձայնագրով սահմանված արժույթով.

ա) [Կենտրոնական Բանկի/Ազգային Բանկի] ———————— հաստատումը———————— ամսաթիվ ————————,համար ————————,

բ) [Նախարարի /————————————նախարարության] համաձայնությունը ———————————— ամսաթիվ ——————, համար ——————, և

գ) ———————————————— [նշել այլ պաշտոնական թույլտվություններ, լիցենզիաներ և (կամ) համաձայնություններ]:

Պետական կառավարման մարմինների կամ հաստատությունների կողմից (այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական/ազգային բանկի) կամ դատարանի կողմից տրված այլ պաշտոնական թույլտվություններ, համաձայնություններ, լիցենզիաներ գրանցումներ և (կամ) հաստատումներ չեն պահանջվում կամ նպատակահարմար չեն (ներառյալ՝ առանց սահմանափակելու ստացման ենթակա գումարների ձեռքբերումը և փոխանցումը KfW-ին՝ սահմանված արժույթով)՝ կապված Վարկառուի կողմից Վարկային համաձայնագրի կնքման ու իրականացման և Վարկային համաձայնագրի շրջանակներում Վարկառուի պարտավորությունների վավերության և իրավաբանական ուժի հետ:

[Այլընտրանք 2՝ բաժին 2.3-ի համար, որը կիրառվում է, եթե, ի լրումն բաժին 2.1 և բաժին

2.2-ում սահմանված փաստաթղթերի, որևէ այլ պաշտոնական թույլտվություն չպետք է ձեռք բերվի՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների]:

2.3 Պետական կառավարման մարմինների կամ հաստատությունների կողմից, (այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական/ազգային բանկի) կամ դատարանի կողմից տրված որևէ պաշտոնական թույլտվություն, համաձայնություններ, լիցենզիաներ գրանցումներ և (կամ) հաստատումներ չեն պահանջվում կամ նպատակահարմար չեն (ներառյալ՝ առանց սահմանափակելու ստացման ենթակա գումարների ձեռքբերումը և փոխանցումը KfW-ին՝ սահմանված արժույթով)՝ կապված Վարկառուի կողմից Վարկային համաձայնագրի կնքման ու իրականացման և Վարկային համաձայնագրի շրջանակներում Վարկառուի պարտավորությունների վավերության և իրավաբանական ուժի հետ:

2.4 Վարկային համաձայնագրի վավերության կամ իրավաբանական ուժի հետ կապված դրոշմանիշային կամ նման այլ հարկի կամ տուրքի վճարում չի պահանջվում:

2.5 Վարկային համաձայնագրի կարգավորման և Վարկային համաձայնագրի ___ կետին համապատասխան արբիտրաժային վարույթի ներկայացման համար Գերմանիայի իրավունքի ընտրությունը վավեր է և իրավաբանորեն պարտադիր: Վարկառուի նկատմամբ կայացված արբիտրաժային որոշումները պետք է ճանաչվեն և կատարվեն Հայաստանի Հանրապետությունում՝ համաձայն հետևյալ կանոնների ——————— [նշել կիրառվող համաձայնագիրը (եթե կա այդպիսին), օրինակ՝ 1958 թվականի Նյու Յորքի կոնվենցիան և (կամ) այն հիմնարար սկզբունքները, որոնք կապված են Հայաստանի Հանրապետությունում արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման հետ]:

2.6 Հայաստանի Հանրապետության դատարանները կարող են իրենց ընտրությամբ վճիռ կայացնել Վարկային համաձայնագրով սահմանված արժույթով կամ արժույթներով:

2.7 Վարկային համաձայնագրի համաձայն Վարկառուի փոխառությունը և Վարկային համաձայնագրի կնքումն ու իրականացումը Վարկառուի կողմից կատարված մասնավոր և առևտրային գործողություն է, այլ ոչ թե կառավարության կողմից իրականացված կամ հանրային գործողություն: Ոչ Վարկառուն, ոչ էլ նրա որևէ սեփականություն օժտված չեն արբիտրաժային, հայցի ներկայացման, կալանքի, արգելանքի և այլ իրավական գործընթացների կիրառումից անձեռնմխելիության իրավունքով:

2.8 Համագործակցության համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և գործում է համաձայն Հայաստանի Հանրապետության սահմանադրության և օրենքների: [Համաձայն Համագործակցության համաձայնագրի 3-րդ հոդվածի], [եթե Համագործակցության համաձայնագիրն ուժի մեջ չի մտել, սակայն գոյություն ունի կրկնակի հարկման համաձայնագիր], համաձայն _____ [նշել համապատասխան համաձայնագիրը կամ կիրառելի օրենքներն ու կանոնակարգերը] / Վարկառուից չի պահանջվում կատարել որևէ նվազեցում կամ պահում Վարկային համաձայնագրի շրջանակներում Վարկառուի կողմից կատարման ենթակա որևէ վճարումից, իսկ նման նվազեցման կամ պահման հետագա պարտադրման դեպքում գործում են Վարկային համաձայնագրի ___ կետի դրույթները, որոնց իրականացումը պահանջվում է Վարկառուից՝ KfW-ին համապատասխան փոխհատուցում տալու համար:

2.9 KfW-ն չի հանդիսանում և չպետք է համարվի Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ, իրավաբանական հասցե ունեցող, բիզնես գործունեություն ծավալող կամ հարկման ենթակա՝ սոսկ Վարկային համաձայնագիրը կնքելու, իրականացնելու կամ կատարումն ապահովելու պատճառով: KfW-ից չի պահանջվում կամ նպատակահարմար չէ պահանջել որևէ լիցենզավորում, որակավորում կամ այլ իրավունքների ձեռք բերում՝ բիզնես գործունեություն ծավալելու համար, կամ KfW-ի կողմից գործակալների կամ ներկայացուցիչների նշանակում Հայաստանի Հանրապետությունում:

Հետևաբար, Վարկային համաձայնագրով սահմանված՝ Վարկառուի պարտավորություններն ուղղակի և անվերապահ, իրավական, վավեր և պարտադիր իրավաբանական ուժ ունեցող պարտավորություններ են, որոնց կատարումը պետք է ապահովվի Վարկառուի կողմից՝ համաձայն համապատասխան պայմանների:

Սույն իրավաբանական եզրակացությունը կազմված է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների:

_____ _____

(վայր) (ամսաթիվ)

[Ստորագրություն]

Անուն, ազգանուն

Կից ներկայացված փաստաթղթեր՝

Ծանոթագրություն. Խնդրում ենք կցել վերը հիշատակված փաստաթղթերի և իրավական ակտերի հաստատված լուսապատճենները (երկար օրենքների կամ Հայաստանի Սահմանադրության դեպքում բավարար են համապատասխան դրույթների պատճենները): Բացի այդ, KfW-ին պետք է ներկայացվի վերոնշյալ բոլոր փաստաթղթերի անգլերեն կամ գերմաներեն պաշտոնական թարգմանությունները, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ փաստաթղթերը կազմվել են անգլերեն կամ գերմաներեն՝ որպես պաշտոնական լեզու, կամ KfW-ն նշել է, որ այլ լեզվով տարբերակը բավարար է:

Հավելված 3

Համապատասխանության մասով պարտավորությունները

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Հարկադրանք նշանակում է ուղղակիորեն կամ անուղղակի կերպով որևէ մեկին կամ որևէ մեկի գույքին վնաս պատճառելը կամ փչացնելը կամ վնաս պատճառելու կամ

փչացնելու սպառնալիքը՝ անձի գործողությունների վրա ոչ պատեհ ձևով ազդելու նպատակով:

Գաղտնի պայմանավորվածություն նշանակում է երկու կամ ավելի անձանց միջև մշակված պայմանավորվածություն՝ անպատեհ նպատակին հասնելու, այդ թվում՝ մեկ այլ անձի գործողությունների վրա անպատեհ ձևով ազդելու համար:

Կոռուպցիա նշանակում է որևէ մեկի գործողությունների վրա անպատեհ ձևով ազդելու կամ որևէ գործողության կատարումից ձեռնպահ մնալու նպատակով որևէ անձի կամ որևէ անձի կողմից ուղղակի կամ անուղղակի որևէ անօրինական վճարում կամ անհարկի առավելություն խոստանալը, առաջարկելը, տալը, կատարելը, պնդելը, ստանալը, ընդունելը կամ միջնորդելը:

Խարդախություն նշանակում է որևէ գործողություն կամ անգործություն, այդ թվում սխալ ներկայացում, որը գիտակցորեն կամ անշրջահայաց կերպով շփոթեցնում է, կամ որով փորձ է արվում շփոթեցնելու որևէ անձի՝ ֆինանսական օգուտ ստանալու կամ պարտավորություններից խուսափելու նպատակով:

Խոչընդոտում նշանակում է (i) կանխամտածված կերպով հետաքննության համար ապացույց հանդիսացող նյութեր ոչնչացնելը, կեղծելը, խեղաթյուրելը կամ թաքցնելը, կամ կեղծ հայտարարություններ ներկայացնելը հետաքննողներին՝ ենթադրյալ կոռուպցիոն, խարդախության, հարկադրանքի և գաղտնի պայմանավորվածությունների գործելակերպերի հետ կապված պաշտոնական քննությունն էապես խոչընդոտելու նպատակով, կամ որևէ մեկին սպառնալը, հարկադրելը կամ վախեցնելը՝ թույլ չտալու նրան բացահայտել հետաքննության հետ առնչվող՝ նրա իմացած տեղեկությունները կամ հետ պահելու նրան հետաքննությունից, կամ (ii) ցանկացած գործողություն, որը նպատակ ունի էապես խոչընդոտելու KfW-ի հասանելիությունը պայմանագրով պահանջվող տեղեկություններին, որոնք առնչվում են ենթադրյալ կոռուպցիոն, խարդախության, հարկադրանքի և գաղտնի պայմանավորվածությունների գործելակերպերի հետ կապված պաշտոնական քննությանը:

Անձ նշանակում է ցանկացած ֆիզիկական անձ, իրավաբանական անձ, գործընկերություն կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող միավորում:

Պատժելի գործելակերպ նշանակում է ցանկացած հարկադրանք, գաղտնի պայմանավորվածություն, կոռուպցիա, խարդախություն կամ խոչընդոտում (ինչպես այս եզրույթները սահմանված են սույն Համաձայնագրով), որը (i) համարվում է անօրինական՝ Գերմանիայի կամ այլ կիրառելի իրավունքով, և որը (ii) ունի կամ կարող է ունենալ էական իրավական կամ հեղինակության մասով ազդեցություն՝ KfW-ի և Վարկառուի միջև կնքված սույն Համաձայնագրի կամ դրա իրականացման վրա:

Պատժամիջոցներ նշանակում է տնտեսական, ֆինանսական կամ առևտրային պատժամիջոցների մասին օրենքներ, կանոնակարգեր, էմբարգոներ կամ սահմանափակող միջոցառումներ, որոնք սահմանվում, կարգավորվում և կիրառվում են Պատժամիջոցներ սահմանող ցանկացած մարմնի կողմից:

Պատժամիջոցներ սահմանող մարմին նշանակում է ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդ, Եվրոպական միություն և Գերմանիայի Դաշնային Հանրապետություն:

Պատժամիջոցների ցանկ նշանակում է պատժամիջոցների ենթակա այն անձանց, խմբերի կամ կազմակերպությունների ցանկը, որը սահմանվել է Պատժամիջոցներ սահմանող որևէ մարմնի կողմից:

2. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Վարկառուն պետք է ՝

ա) KfW-ի պահանջով՝ անհապաղ հասանելի դարձնի բոլոր վերաբերելի՝ «իմացեք ձեր հաճախորդին» կամ նմանատիպ այլ տեղեկությունները Վարկառուի մասին, որը կխնդրի KfW-ն.

բ) KfW-ի պահանջով՝ անհապաղ տրամադրի Ծրագրին առնչվող ամբողջ տեղեկությունները և Վարկառուի ու նրա (ենթա)կապալառուների և այլ

փոխկապակցված կողմերի այն փաստաթղթերը, որոնք KfW-ին անհրաժեշտ կլինեն իր պարտավորությունների կատարման համար՝ ուղղված պատժելի գործելակերպերի, փողերի լվացման և (կամ) ահաբեկչության ֆինանսավորման դեպքերի կանխարգելմանը, ինչպես նաև Վարկառուի հետ բիզնես հարաբերությունների շարունակական մոնիթորինգի համար, ինչն անհրաժեշտ է սույն նպատակի իրականացման համար.

գ) անհապաղ և իր իսկ նախաձեռնությամբ՝ KfW-ին տեղեկացնի Ծրագրի հետ առնչվող՝ պատժելի գործելակերպի, փողերի լվացման և (կամ) ահաբեկչության ֆինանսավորման ցանկացած դեպքի մասին՝ տեղեկանալուն կամ կասկածներ ունենալուն պես.

դ) KfW-ին տրամադրի Ծրագրի և դրա առաջընթացի վերաբերյալ ցանկացած և ամբողջ տեղեկություններն ու հաշվետվությունները, որոնք KfW-ն կպահանջի սույն հավելվածի նպատակներով, և

ե) հնարավորություն տա KfW-ին և իր գործակալներին ցանկացած ժամանակ ստուգելու Վարկառուի և իր (ենթա)կապալառուների և այլ փոխկապակցված կողմերի փաստաթղթերը, որոնք վերաբերում են Ծրագրին, և այցելել Ծրագրի և դրան առնչվող բոլոր տեղանքները՝ սույն հավելվածի նպատակներով:

3. ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Գերմանիայի իրավունքի կամ Վարկառուի երկրի իրավունքի առնչությամբ Վարկառուն հավաստում է, որ Վարկառուի անունից Ծրագրի առնչությամբ գործող անձանցից որևէ մեկը չի կատարել որևէ պատժելի կամ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված արարք կամ ներգրավված չէ դրանցում:

Սույն կետում սահմանված հավաստումների և երաշխիքների մասով հայտարարությունն առաջին անգամ արվել է սույն Համաձայնագրի կնքմամբ: Համարվում է, որ դրանք կրկին կներկայացվեն Վարկի յուրաքանչյուր փաստաթղթի

կազմման ժամանակ՝ վկայակոչելով այդ պահին գերիշխող հանգամանքները:

4. ՈՐՈՇԱԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարկառուն պարտավորվում է անհամապատասխանության դեպքը պարզելու մասով լիովին համագործակցել KfW-ի և նրա գործակալների հետ՝ անմիջապես, երբ KfW-ն կամ Վարկառուն կտեղեկանան կամ կասկածներ կունենան պատժելի գործելակերպերի, փողերի լվացման և (կամ) ահաբեկչության ֆինանսավորման որևէ դեպքի մասին: Մասնավորապես, Վարկառուն անհապաղ և ողջամիտ մանրամասնությամբ պատասխանում է KfW-ի ցանկացած ծանուցմանը և KfW-ի պահանջով տրամադրում է այդ պատասխանի համար փաստաթղթային հիմնավորումներ:

5. ՈՐՈՇԱԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԶԵՐԾ ՄՆԱԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարկառուն չի կնքի որևէ գործարք կամ չի ներգրավվի Ծրագրի հետ կապված որևէ գործունեության մեջ, որը կհամարվի Պատժամիջոցների խախտում:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2019 թվականի նոյեմբերի 11-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության և Վերականգնման վարկերի բանկի միջև «Քաղաքականության վրա հիմնված վարկ-շրջակա միջավայրի պահպանություն-BMZ 3010 00 579, վարկ N 29426» վարկային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն